

COVID-19 գործառնությունների գրավոր հաշվետվություն

Տեղական կրթական գործակալության (LEA) անուն (ՏԿԳ)	Կոնտակտային անուն և պաշտոն	Էլ. փոստի հասցե և հեռախոս	Ընդունման ամսաթիվ
Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան	Փիտր Քնապիկ, Տարրական կրթության վարիչ	PeterKnapik@Burbankusd.org 818-729-4482	հունիսի 25, 2020

Տրամադրված նկարագրությունները պետք է բավարար մանրամասներ պարունակեն, սակայն լինեն բավականաչափ հակիրճ, ձեր ՏԿԳ-ի փոխությունները ցույց տալու համար: ՏԿԳ-ին խստորեն խրախուսում ենք չգերազանցել նկարագրությունները 300 բառից ավելի:

Նեկայացնել ծրագրի փոփոխությունները, որոնք ՏԿԳ-ն կատարել է ի պատասխան COVID-19-ի վթարային իրավիճակի դպրոցների փակման կապակցությամբ և աշակերտների ու նրանց ընտանիքների վրա ունեցած հետևանքների մասին:

Բոլոր դպրոցներին (ԱՄ-12-րդ դասարան) և դասընթացներին, ինչպես նաև այլընտրանքային դպրոցներին առաջարկվել է հեռավոր ուսուցման մոդելը: Հեռակա ուսուցման ընթացքում ունեցել ենք 95% մասնակցություն, որն արտացոլում է անձամբ դպրոց հաճախելու տոկոսը: Մասնակցության ստուգում անց էր կացվում ամեն շաբաթ՝ ոչ ավանդական (asynchronous) ուսուցման պատճառով: Դասերը համահունչ էին Կալիֆոռնիայի նահանգային չափանիշներին: Մահմանափակ քանակությամբ դասընթացներ պարունակում էին նոր նյութեր, քանի որ աշխատակազմը և աշակերտները համակերպվում էին ուսուցման նոր մոդելի հետ: Միջնակարգ դպրոցում, գնահատականները տրվել են կրեդիտ կամ ոչ մի կրեդիտ ձևաչափով, իսկ տարրական դպրոցում՝ մեկնաբանությամբ:

Բոլոր միջոցառումները, արտադասարանական արշավները, բացօդյա գիտական ճամբարը, ելույթները և այլն չեղյալ համարվեցին:

Ծնողների, ուսուցիչների, աշխատակիցների և ադմինիստրատորների հետ անհրաժեշտ հանդիպումները անցկացվեցին համացանցային միջավայրում:

Բոլոր աշխատակիցներին և ընտանիքներին գերատեսչի կողմից ուղարկված հաղորդագրությունները կատարվեցին շաբաթը 2 անգամ, իսկ այնուհետև՝ մեկ անգամ:

Կրթական գրասենյակի և նրա ենթակոմիտեների, SSC, ELAC, DELAC, SSTs, IEPs, 504s, PTAs, դրամահավաք կոմիտեների, CSEA և BTA բանակցությունների հանդիպումները շարունակվեցին տեղի ունենալ համացանցային եղանակով:

Դպրոցական շրջանը շարունակեց շաբաթվա ընթացքում սնունդ մատուցել՝ ընտանիքներին տրամադրելով 5 օրվա սնունդ: Ամեն շաբաթ առաքվում էր ավելի քան 10,000 ճաշ: Ընտանիքները սնունդը վերցնում էին տարբեր վայրերից:

Հերթական ուսումնական տարվա ընթացքում երեխաների վերահսկողություն կամ խնամք չի կատարվել, բացի Տղաների և աղջիկների ակումբից, քանի որ դպրոցները և խնամքի կենտրոնները փակ էին:

Դպրոցի ավարտական և հաջորդ դասարան փոխադրման հանդեսները տեղի ունեցան համացանցային եղանակով:

Ընթացիկ և հաջորդ ուսումնական տարվա արձանագրությունները կատարվեցին համացանցային եղանակով:

Արտակարգ իրավիճակների ղեկավարման հրամանատարությունը (EOC) հանդիպում էր շաբաթը 2 անգամ քննարկելու շրջանի առողջությունը և անվտանգությունը, դասավանդումն ու ուսուցումը, Հատուկ ուսուցումը, անզլերեն սովորողները, սոցիալ հուզական ուսուցումը, գնահատականները, մասնագիտական վերապատրաստումը, տեխնոլոգիան, աշխատակազմը, շինությունները, բյուջեն և կառավարումը:

Բրբանկի ուսուցիչների (BTA) և դպրոցների մյուս աշխատակիցների ասոցիացիաների (CSEA) հետ բանկցել ենք բազմաթիվ թեմաների շուրջ, որոնցից են ուսումնական ծրագիրը, դասավանդումը, դասի պլանավորումը, գնահատումը, աշխատանքային ժամերը, տնից աշխատելը և անհրաժեշտության դեպքում աշխատավայր ժամանելը:

Հարցաթերթիկները և տեխնոլոգիայի կարիքների, հեռակա ուսուցման, երեխաների խնամքի, «կրեդիտ կամ ոչ մի կրեդիտ» գնահատականի վերաբերյալ համայնքի տված պատասխանները մեկնաբանվեցին դպրոցի և շրջանի ադմինիստրատորների կողմից: Թղթե փաթեթներ տրամադրվեցին այն ընտանիքներին, ովքեր դրանց կարիքն ունեին: Երբ ընտանիքը Քրոմբուկի կարիք ուներ, այն տրամադրվեց նրանց համար: Երբ ընտանիքը թեժ կետի կարիք ուներ համացանցային կապ հաստատելու համար, այն տրամադրվեց նրանց համար: Հատուկ ուսուցման ծառայություններ ստացող աշակերտների մի քանի ընտանիքների տրամադրվեցին թղթե փաթեթներ, հեռակա ուսուցման փոխարեն: Շարունակվեցին տրամադրվել ուսուցման երկու տեսակի հարթակները: Հատուկ ուսուցման ծառայություններ ստացող աշակերտներին, անգլերեն սովորողներին, խնամատար և անօթևան դեռահասներին, Տիտղոս I դպրոցի աշակերտներին (և նրանց ընտանիքներին) ուսումնական աջակցություն ցույց տրվեց ուսուցչի կողմից՝ դասարանային հանդիպումների միջոցով, աջակցող հանդիպումներ՝ ուսուցչի օգնականների կողմից, ELD դասընթացներ ուսուցչի և նրա օգնականի կողմից: Ընտանիքները սոցիալ հուզական աջակցություն ստացան նաև ԱՄ-12-րդ դասարանների միջամտության մասնագետների կողմից:

Սկարագրել, թե ինչպես է ՏԿԳ-ը բավարարում անգլերեն սովորողների, խնամատար երեխաների և ցածր եկամուտ ունեցող աշակերտների կարիքները:

Դպրոցական շրջանը Քրոմբուկ, թեժ կետեր և ռեսուրսներ է հատկացրել ցածր եկամուտ ունեցող և խնամատար երեխաներին (և նրանց ընտանիքներին), ովքեր սարք էին պահանջել: Անվճար և զեղչված գնով սնունդ ստացող ընտանիքները շաբաթական 10 ճաշ ստացան Մանդի ծառայությունների բաժնի կողմից: Covid-19 և դպրոցների փակման պատճառով, աշխատակազմը հեռախոսազանգերի և հաղորդագրությունների միջոցով կրթական ռեսուրսների, սննդի, բժշկական մատակարարների, հոգեկան առողջության և գործազրկության ռեսուրսների հասանելիություն ապահովեց աշակերտների համար:

ԲԴՄՇ-ն փոփոխեց գնահատման համակարգը «կրեդիտ և ոչ մի կրեդիտ» եղանակի: Աշակերտներից պահանջվում էր կատարել աշխատանքի մեծ մասը, և պետք է բավարար կերպով ընդունվեր ուսուցչի կողմից: Ուսուցիչները հնարավորություն տվեցին աշակերտներին ոչ բավարար չափով կատարած աշխատանքները նորից կատարել: Համացանցային հանդիպումների ընթացքում, ուսուցիչները հրահանգներ ստացան գնահատման նոր համակարգի մասին: Գերատեսչի հաղորդակցության միջոցով, ծնողները տեղեկացան գնահատման համակարգի մասին, որը թարգմանվել էր հայերեն և իսպաներեն լեզուներով: Աշակերտները, ներառյալ անգլերեն սովորողները, խնամատար դեռահասները, անօթևան և Տիտղոս I դպրոցների և մնացած բոլոր աշակերտները չտուգանվեցին «կրեդիտ և ոչ մի կրեդիտ» գնահատականի համակարգի անցման պատճառով, քանի որ ուսուցումը փոխարինվել էր հեռակա ուսուցմամբ և թղթային փաթեթներով:

Մինչև հեռակա ուսուցման սկսելը, ուսուցիչները համացանցային մասնագիտական վերապատրաստում ստացան տեխնոլոգիայի վերաբերյալ: Այդ ընթացքում, աշխատակիցները հեռախոսազանգերի և էլեկտրոնային փոստի միջոցով կապ հաստատեցին ընտանիքների հետ՝ նրանց տեխնոլոգիական կարիքները քննարկելու համար: Հաղորդակցությունը կատարվում էր հայերեն, իսպաներեն և անգլերեն լեզուներով: Համացանցային դասերը սկսելուց հետո, ուսուցիչները և օժանդակ աշխատակազմը զանգահարեցին այն ընտանիքների, ում երեխաները մուտք չէին գործում Գուգլ դասասեսնյակ և/կամ չէին հանձնում կատարած աշխատանքը և օգնեցին նրանց: Միջնակարգ դպրոցի անգլերեն սովորողները համացանցային ուղիղ եթերով օգնություն ստացան: Տարրական դպրոցի անգլերեն սովորողները, մասնակցեցին նախանշանակված ELD դասընթացների և Գուգլ հանդիպումների: Մասնագիտական վերապատրաստման թեման ուղղված էր դեպի անգլերեն սովորողները, խնամատար դեռահասները, անօթևան և Տիտղոս I դպրոցների աշակերտները:

Ուսուցիչներից շատերը դասերի տեսանյութեր հատկացրեցին երեխաներին՝ օրվա ցանկացած պահին դասերը կատարելու համար: Մյուսները, խնդիրների լուծման օրինակներ և գրառումներ տեղադրեցին՝ ՅուԹուբով տեղանյութերը դիտելու և ընթերցանության ընթացքում օգտվելու համար: Տարբեր դասերի (ընտրանիների) միջոցով ուսուցիչները թույլ են տալիս աշակերտներին և ընտանիքներին ընտրել, թե ինչպես ցույց տալ սովորածը: Ուսուցիչների մշակած փոխկապակցված դասերի միջոցով, աշակերտները ցույց են տալիս, թե ինչպես են հասկացել դասը տալով կարճ պատասխաններ, լրացնելով նախադասությունները և/կամ համապատասխան բառերը ճիշտ տեղը դնելով և այլն: Նաև, Ֆլիպպրիդ ծրագիրը թույլ տվեց աշակերտներին բանավոր խոսքի կամ խաղի միջոցով տալ պատասխաններ:

Անօթևան և խնամատար դեռահասների գործակալը, ինչպես նաև յուրաքանչյուր դպրոցի միջամտության մասնագետը, շարունակեց օգնել նրանց, համոզվելով, որ հոգ էր տարվում նրանց կրթական, ինչպես նաև առողջական և սոցիալ հոգեկան կարիքները:

Սկարագրել, թե ինչ քայլեր են ձեռնարկվել ՏԿԳ-ի կողմից հեռակա որակյալ ուսուցման հնարավորություն հատկացնելու համար:

Հեռակա ուսուցման մոդելը ներկայացնելու համար, դպրոցական շրջանը կրթական արձագանքի թիմ կազմեց: Այն կազմված էր Ուսուցողական ծառայությունների գծով գերատեսչի տեղակալից, Կրթական ծառայությունների գծով գերատեսչի տեղակալից, Տարրական կրթության վարիչից, Կրթական տեխնոլոգիայի կազմակերպիչից և

մասնագետից, Անգլերեն լեզվի զարգացման կազմակերպչից, մասնագիտական վերապատրաստման միջնակարգ կրթության մասնագետից և տարրական դպրոցների մի քանի ուսմասվարներից: Ահա թիմի առաջին առաջադրանքները.

1. Հավաքել ուսումնական ծրագրի մշակման թիմ, որպեսզի ուսուցիչները սկսեն համացանցային ուսուցումը 4 շաբաթվա պահեստային նյութով:
2. Հարցում անցկացնել Քրոմբուկների և/կամ թեժ կետերի անհրաժեշտության վերաբերյալ:

ա) Քրոմբուկներ և թեժ կետեր ձեռք բերել կարիքները հոգալու համար:

բ) Ստեղծել ապահով և արդյունավետ բաշխման գործընթաց:

գ) Ստեղծել համակարգ՝ աշակերտներին հանձնած բոլոր սարքերի տեղն իմանալու համար:

3. Ընտրել Գուգլ դասասենյակ ծրագիրը՝ որպես առաջադրանքների առաքման հարթակ:

4. Հետագայում մշակել ուսուցման մոդուլներ Գուգլ սլայդում, Գուգլ միթում, Ջումում, հետևել հանձնարարություններին, էկրանի ընտրություն, Ֆլիպգրիդում և ավելին:

Առաջադրանքների հաջորդ փուլը գնահատականների և դասերին ներկա գտնվելու վերաբերյալ էր: Դպրոցական շրջանը որոշեց գնահատականներ չնշանակել, բայց ընդունեց «կրեդիտ կամ ոչ մի կրեդիտ» տարբերակը հեռակա ուսուցման ընթացքում կատարած աշխատանքը գնահատելու համար: Մշակվեց նաև դասերին ներկա գտնվելու համակարգը, որ ոչ մի աշակերտ չկարողանա չմասնասնակցել դասերին: Այն սկսվեց ուսուցչի կապ հաստատելով, իսկ հետո գործը հասավ միջամտության մասնագետին ու ադմինիստրատորին:

Դպրոցական շրջանը շարունակեց մասնագիտական վերապատրաստումը ուսուցիչներին «գինելու» համար: Տրամադրում էինք նաև ամենօրյա օժանդակ դասընթացներ, որոնց ընթացքում ուսուցիչները կարող էին ներկա գտնվել և հարցեր տալ կրթական տեխնոլոգիայի վերաբերյալ: Անցկացվեցին նաև, մասնագիտական վերապատրաստման դասընթացներ ուղիղ եթերի միջոցով, որոնց ընթացքում շրջանի ուսուցիչները չափազանց լավ մասնակցություն ցուցաբերեցին:

Հեռակա ուսուցման ընթացքում, ընտանիքներին աջակցեցինք ուսուցիչների, ուսմասվարների և տեխնոլոգիայի մասնագետների միջոցով, ովքեր օգնեցին նրանց համացանցային կապ հաստատել, աշխատել Գուգլ դասասենյակում, Ֆլիպգրիդ ծրագրի և տեխնոլոգիայի վրա հիմնված ուսումնական ծրագրի, արագացված ընթերցող (Accelerated Reader) և iReady ծրագրերի և այլ հարթակների միջոցով:

Դպրոցական շրջանը հարցաթերթիկի միջոցով ծնողների կարծիքը հարցրեց հեռակա ուսուցման, սոցիալ-հուզական և նրանց հետաքրքրող այլ թեմաների շուրջ և միավորեց նրանց պատասխանները:

Սկարագրել, թե ինչ քայլեր են ձեռնակվել ՏԿԳ-ն կողմից դպրոցական սնունդ մատակարարելու համար՝ միաժամանակ ապահովելով հասարակական հեռավորություն:

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի Մենդի ծառայությունների բաժինը 5 օրվա նախաճաշ և ճաշ է բաժանել ամեն չորեքշաբթի օր: Բաշխումը կատարվում էր 3 դպրոցներում՝ ավտոմեքենաների հոսքի միջոցով, առավոտյան ժամը 9-ից մինչև երեկոյան ժամը 5:30-ը: Ավտոմեքենայի վարորդը (ծնող/պահապան) տեղեկացնում էր Մենդի ծառայության աշխատակցին, թե քանի աշակերտի համար է սնունդ հարկավոր վերցնել: Վարորդը մնում էր ավտոմեքենայի մեջ նստած, իսկ աշխատակիցները պատրաստում են սնունդը և դնում երկար սեղանի ծայրին: Լրիվ սնունդը սեղանին դնելուց հետո, աշխատակիցը կանգնում էր մոտավորապես 6-8 ոտքաչափ հեռու: Ավտոմեքենայից իջնելուց առաջ, վարորդը պետք է դիմակ հագնի և վերցնի սնունդը սեղանի վրայից: Հասարակական հեռավորություն հիշեցնող ցուցանակները տեղադրված են յուրաքանչյուր վայրում:

Կիրառված միակ հրաժարականը եղել է այն մասին, որ յուրաքանչյուր աշակերտին օրական հատկացնենք միայն մեկ տուփ կաթ: Մեր հինգ օրվա բաշխման ընթացքում, մեզանից պահանջվում էր յուրաքանչյուր աշակերտին տալ մեկ տուփ կաթ յուրաքանչյուր սննդի փաթեթի հետ միասին: Հետևաբար, մեկ օրվա ընթացքում 10 տուփ կաթ էինք բաժանում յուրաքանչյուր աշակերտի, քանի որ ամեն մեկը ստանում էր նախաճաշ և ճաշ: Ընտանիքները դժգոհեցին, որ չափազանց շատ կաթ ենք բաժանում և նրանք ստիպված են թափել այն: Կալիֆոռնիայի կրթական գրասենյակն անմիջապես հասատեց բաժանել միայն 5 տուփ կաթ: Մեկ տուփ յուրաքանչյուր օրվա համար: Դաշնային և նահանգի կողմից տրամադրված բոլոր մյուս հրաժարականները ինքնաբերաբար էին տրված, և կարիք չկար դիմումագիր լրացնել: Վաղ որոշում էր կայացվել, որ մենք կօգտագործենք միայն փոքրաթիվ աշխատակիցներ, ովքեր կկարողանան շարունակել աշխատել, պատրաստել և բաժանել պատրաստված սնունդը: Մենդի ծառայությունների բաժինը մի մեթոդ իրականացրեց, որը թույլ տվեց նույն աշխատողները աշխատել պատվող հերթափոխով և այն նվազեցրեց շփումը բազմաթիվ մարդկանց հետ և հասարակական հեռավորության մտահոգություն չստեղծեց խոհանոցում աշխատելիս: Բոլոր մեր աշխատակիցներն արդեն վերապատրասվել էին պատշաճ մաքրման, ախտահանման և ձեռնոցներ կրելու համար, քանի որ այն հանդիսանում է մեր ամենօրյա պրակտիկան: Լրացուցիչ

կերպով, աշխատակիցներին էին տրամադրվել դիմակներ, ցուցանակներ հասարակական հեռավորություն պահելու և տարբեր հիվանդությունների ախտանշանները ճանաչելու վերաբերյալ: Մենք ունեինք նաև դպրոցական շրջանի մի քանի այլ աշխատակիցներ, ովքեր ամեն շաբաթ, կամավոր օգնում էին բաժանել սնունդը և պատրաստված էին ձեռնոց և դիմակ հագած սպասարկել ավտոմեքենաներին հասարակական հեռավորություն պահելով սնունդ վերցնող ավտոմեքենաներից:

Մննդի ծառայությունների բաժանմունքը ձեռքի հաշվողական մեքենայով հաշվում էր, թե քանի ընտանիքի/ավտոմեքենայի է ամեն շաբաթ սպասարկել յուրաքանչյուր վայրում: Յուրաքանչյուր շաբաթ, սպասարկված ավտոմեքենաների ընդհանուր թիվը տատանվում էր 370 – 400-ի միջև: Ինչպես պահանջվում էր, մենք հաշվեցինք նաև, թե սննդի քանի փաթեթ ենք բաշխել յուրաքանչյուր շաբաթ.

3/16 1,198 փաթեթ = 11,980 ճաշ

3/25 1,060 փաթեթ = 10,600 ճաշ

4/1 819 փաթեթ = 8,190 ճաշ

4/8 880 փաթեթ = 8,800 ճաշ

4/15 968 փաթեթ = 9,680 ճաշ

4/22 931 փաթեթ = 9,310 ճաշ

4/29 973 փաթեթ = 9,730 ճաշ

5/6 823 փաթեթ = 8,230 ճաշ

5/13 832 փաթեթ = 8,320 ճաշ

Ընդհանուր 8,484 փաթեթ = 84,840 ճաշ

Նկարագրել, թե ինչ քայլեր են ձեռնարկվել ՏԳԳ-ի կողմից, երեխաների վերահսկողությունը սովորական դպրոցական ժամերի ընթացքում ապահովելու համար:

Բրբենքի Տղաների և աղջիկների ակումբը բաց էր էական աշխատակիցների երեխաների համար, ամեն օր, առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 6-ը, մարտի 16-ից մինչև մայիսի 22-ը: Ընտանիքներին խորհուրդ տրվեց օգտվել Բրբենքի Տղաների և աղջիկների երեխաների խնամքի ծառայություններից:

Դպրոցական շրջանը նորից բացեց Հորաս Մանն երեխաների խնամքի կենտրոնը (3 ամսականից – 5 տարեկան), Մոնտերեյ երեխաների խնամքի կենտրոնը (3 ամսականից – 1 տարեկան) և Զանգի շուրջ երեխաների խնամքի կենտրոնները (մանկապարտեզից – 5-րդ դասարան) երեքշաբթի օրը, մայիսի 26-ին, առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 6-ը, ամեն օր աշխատելու համար:

Դպրոցների և նրանց տեղամասերի փակ լինելու պատճառով, դպրոցներում և նրանց տեղամասում երեխաների վերահսկողություն կամ խնամք չի կատարվել մարտի 16-ից մինչև մայիսի 22, որը ուսումնական տարվա վերջին օրն էր հանդիսանում:

Առողջապահական գրասենյակի հրահանգներին են հետևել երեխաների խնամքի ծրագրերը, որոնցից են ջերմության չափումը, հասարակական հեռավորության պահպանումը, ձեռքերի լվանալը և դիմակների կրումը: Ստուգման տարր հանդիսացան էական աշխատողները, որոնց միջոցով որոշվեց, թե որ երեխաներին է հարկավոր տալ առաջնահերթություն նրանց խնամքով ապահովելու համար:

Դպրոցական շրջանը տեղեկություն է տեղադրել իր կայքէջում երեխաների խնամքի վերաբերյալ: